Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԷԿՈՒՄԵՆԻԶՄԻ ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր աշխուժորեն ներգրավված է էկումենիզմի մեջ, գործնականորեն մասնակցում է բազմաթիվ էկումենիկ համագումարների, ժողովների, նմանատիպ հավաքների՝ ջանալով իր ներդրումը բերել Քրիստոսի Սուրբ Եկեղեցու միության համար: Սակայն էկումենիկ շարժման մեջ ընդգրկված տարբեր Եկեղեցիներ իրենց յուրահատուկ վերաբերմունքն ունեն այս միջեկեղեցական շարժման հանդեպ, որով եւ իրականացնում են իրենց աշխատանքները նման բնույթի համաժողովների ընթացքում: Եկեղեցիների միության եւ համագործակցության արդյունավորման համար հիմնադրված Էկումենիկ շարժմանը մասնակցող տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչների՝ էկումենիկ ժողովներին հանդես գալու ձեւերը, ինչպես նաեւ հայացքներն ու դիրքորոշումները ցույց են տալիս, թե ինչ մտքեր եւ միմյանց մասին ինչ կարծիքներ են պտտվում վեհ գաղափարներով պարուրված էկումենիզմի երնաբեմում:

Էկումենիզմ բառը ծագում է հունարեն οἰκουμενὴ (oikoumene) բառից[1], որը նշանակում է բնակեցված երկիր: Այս եզրը գործածվում էր հունահռոմեական աշխարհում խիտ բնակեցված երկրի եւ կամ Հռոմեական կայսրության համար: Այժմ այս բառը գործածվում է քրիստոնեական հարանվանությունների կամ Եկեղեցիների առնչությամբ, որոնք բաժանված են վարդապետությամբ, պատմությամբ, գործունեությամբ, եւ *էկումենիզմ* եզրը ցույց է տալիս քրիստոնեական միության, Քրիստոնեական Եկեղեցու միության գաղափարը: Էկումենիզմի սկզբնական շրջանում նշանակալի են Ստոկհոլմի (1925), Լոզանի (1927), Օքսֆորդի եւ Էդինբուրգի (1937) համագումարները[2]: Էկումենիզմը, իբրեւ շարժում, ինչպիսին այն հասկանում ենք այսօր, ձեւավորվել է հիմնականում «Կյանք եւ գործ» եւ «Հավատք եւ կարգ» երկու էկումենիկ հոսանքներից, որոնք հատկապես Օքսֆորդի եւ Էդինբուրգի համաժողովներից հետո՝ 1937 թ., որոշեցին վերածվել մեկ կազմակերպության՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի»:

Էկումենիկ շարժմանը մասնակից Եկեղեցիներն ունեն դավանաբանական ու վարդապետական տարբերություններ ու անհամաձայնություններ, որոնց շուրջ քննարկումներ են իրականացվում դեռ անցյալ դարի սկզբներից: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարերի ընթացքում պայքարել է հույն եւ լատին Եկեղեցիների միաբարարական ձգտումների եւ պարտադրանքների դեմ՝ պահպանելով աստվածաբանական, քրիստոսաբանական, եկեղեցաբանական իր դիրքորոշումները: Նման բնույթի տարբերությունները երբեմն որակվում են որպես հոգեբանական բարդույթներ, քանզի չնայած դավանաբանական բոլոր տարբերություններին, որոնք բաժանում են Եկեղեցիները, էկումենիկ շարժման մասնակիցները

1 οἰκεω, *oikeo* - *բնակվել* բայի ներկա դերբայն է (feminine present middle participle):

2 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, réunis à Moscou à l'occasion de la célébration solennelles des fêtes du 500eme anniversaire du l'autocéphalie de l'Eglise Orthodoxe Russes, 8-18 juillet, 1948, volume II, Moscou, 1952, էջ 7:

համոզված են, որ քրիստոնյաների բաժանման պատճառն այդ տարբերությունների մեջ չէ, այլ վարդապետական բազմաթիվ կանխակալ կարծիքների, որոնք ժամանակի ընթացքում բազմապատկվելով՝ դարձան հոգեբանական իրական բարդույթներ[3]: Էկումենիկ շարժման համագումարների բոլոր մասնակիցները համաձայն են եղել հաստատելու, որ քրիստոնեական միության խզման պատճառ են դարձել անհիրազեկությունը, կանխակալ կարծիքները, հոռետեսական մտածողությունը, բանաձևումների աղոտ հաստատումները, պատվախնդրությունը, նախանձը, կասկածը, անկեղծության պակասը եւ մեքենայությունները[4]: Սակայն հոգեբանական բարդույթի, սեփական կարծրացած դիրքորոշման պաշտպանությունը պատվի եւ հեղինակության հարց համարելու վերաբերյալ արտահայտված այս կարծիքն էկումենիկ շարժման մասնակից Եկեղեցիների գրեթե յուրաքանչյուր ներկայացուցիչ, իհարկե ոչ բարձրաձայն, վերագրում է մյուսներին եւ ոչ թե հենց իրեն: Կարելի է ասել, որ Եկեղեցիների բաժանման կամ միմյանց հետ հաղորդական միության խզման պատճառը նաեւ դավանանքի, վարդապետության եւ աստվածաբանության հասկացությունների միախառնումն է: Հարկ է տարբորոշել, հաստատել եւ իրարից որոշակիորեն զատել դավանություն ու վարդապետություն կոչված եզրերը: Դավանությունը Սուրբ Գրքից քաղված եզրակացություն է եւ ճշտությամբ բացատրված նախադասություն, որը բացարձակ կերպով ընդունվում է Եկեղեցու եւ բոլոր հավատացյալների կողմից՝ չընդունելու պարագային Եկեղեցու ծոցից դուրս մնալու պայմանով: Վարդապետությունը եւս Սուրբ Գրքից քաղված եւ ճշտությամբ բացատրված նախադասություն է, որին, սակայն, կարելի է բացարձակ կերպով չհավատալ եւ չընդունելը պայման չէ Եկեղեցու ծոցից մերժված լինելու: Դավանությունը Եկեղեցու հեղինակությամբ զորացած ճշմարտություն է, վարդապետությունը՝ դպրոցների հեղինակությամբ հաստատված կետ: Դավանությունը պատկանում է հավատքին եւ կրոնին, վարդապետությունը պատկանում է ուսմանն ու աստվածաբանությանը[5]: Աստվածաբանության մեջ մեծ դեր է խաղում վարդապետությունը կամ վարդապետական ուսմունքը, եւ Ուղղափառ Եկեղեցին, ավելի վճռականորեն քան կաթոլիկությունը, առանձնացնում է դավանություններն աստվածաբանությունից[6]:

ԷԿՈՒՄԵՆԻԶՄԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ - Էկումենիկ շարժման համագումարները գրեթե ամեն անգամ վիճարկում են Եկեղեցու գաղափարը՝ բազմաթիվ եւ զանազան տեսակետներով, բայց ամեն անգամ հաստատում են, որ «եկեղեցի» բառը բոլոր մասնակիցների համար ճշգրտորեն նույնը չի նշանակում: Բողոքականության բազմաթիվ ճյուղերից գրեթե յուրաքանչյուրն ունի Եկեղեցու յուրահատուկ հասկացություններ[7]: Հասկանալու համար էկումենիկ համագումարներին տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչների արտահայտած դիրքորոշումները, պետք է պատկերացում ունենալ, թե ինչպիսի եկեղեցաբանական գաղափարներից է ազդված նրանց մտածելակերպը:

---

3 Անդ, էջ 38.

4 Անդ, էջ 27:

5 «Հայոց Եկեղեցին եւ իւր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, նախապէս ֆրանսերէն հրատարակեց, յետոյ հայերէնի վերածեց Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, նախկին պատրիարք Կ. Պոլսոյ (1896-1908) (վեցերորդ՝ վերանայուած տպագրութիւն)», Մոնրէալ, 2001, էջ 115-116:

6 **Н. Бердяев**, Русская идея, Харьков, Фолио, Москва, «АСТ», 1999, էջ 159:

7 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 27:

Ըստ առաքյալի՝ Եկեղեցին Քրիստոսի խորհրդական մարմինն է, եւ մենք՝ նրա անդամները (Ա Կորնթ. ԺԲ 27, Եփես. Ա 23, Դ 12, Կող. Ա 24, Բ 19): Քրիստոս Եկեղեցու գլուխն է (Կող. Ա 18), Եկեղեցին՝ Քրիստոսի հարսը (Մատթ. ԻԲ 1-14, ԻԵ 1-13), որի փեսան Քրիստոսն է (Մարկ. Բ 19), անարատ Գառան անարատ հարսն է Եկեղեցին (Հայտն. ԻԲ 17, Եփ. Ա 4, Ե 27), որի համար Քրիստոս Իրեն տվեց նրան՝ սրբացնելու (Եփ. Ե 25-26) եւ որի համար չի դադարում հոգ տանելուց՝ որպես սեփական մարմնի (Եփ. Ե 29): Եկեղեցի բառը (ekklesia, հուն. ek-kalein, ֆր. appeler hors-դուրս կանչել) նշանակում է ժողով, այն ցույց է տալիս ժողովրդի՝ հիմնականում կրոնական բնույթի հավաքականությունը: Ekklesia նշանակում է հավատացյալների հավաք, եւ այս բառը հունարեն դասական գրականության մեջ գործածվում էր պաշտոնականորեն նույն գործով զբաղվող քաղաքացիների խմբի համար: Kyriake եզրը, որից ծագում է այլ լեզուների Եկեղեցի Church (անգլ.), Kirche (գերմ.) բառը, իր նշանակությամբ ցույց է տալիս նրանց, ովքեր պատկանում են Տիրոջը[8]: Հին Կտակարանում Տիրոջը պատկանելու հատկությունն առաջին հերթին վերաբերում է ղեւտացիներին, ովքեր վերստին հեթանոսության դարձած հրեաներից առաջինն արձագանքեցին Մովսեսի կանչին. «Ով Տիրոջն է պատկանում, թող ինձ մոտենա» (Ելք ԼԱ 1-26):

Դարերի ընթացքում եկեղեցական հեղինակները Եկեղեցու մասին տարբեր գաղափարաբանություններ են զարգացրել, իսկ կաթոլիկ հեղինակները, իհարկե, շեշտը միշտ դրել են Կաթոլիկ Եկեղեցու ընդհանրականության եւ գլխավորության վրա:

Դոմինիկյան Ալբերտուս Մագնուսը (Մեծ) (1206-1280)՝ հայտնի կաթոլիկ աստվածաբան Թոմա Աքվինացու ուսուցիչը, մեկ այլ հայտնի հեղինակի՝ Բոնավենտուրայի (1221-1274) նման տարբերակում է դնում Եկեղեցու եւ Քրիստոսի «խորհրդական մարմնի» միջեւ, քանզի «խորհրդական մարմինը» նշանակում է ավելին, քան հավատացյալ ժողովրդի հավաքականությունը: Ի դարի ազդեցիկ կաթոլիկ հեղինակ Իվ Կոնգարը եւս ուշադրություն է դարձրել այս երկու հեղինակների կարծիքների նույնությանը: Նման տեսանկյունով տարբերակում է դրվում շնորհի համայնքին պատկանելու եւ շնորհի միջոցներ ունեցող հասարակությանը պատկանելու միջեւ[9]: Պետք է նշել, որ ֆրանցիսկյան Բոնավենտուրայի՝ Եկեղեցու վարդապետությունը հիմնավորապես օգոստինոսական է: Վերոնշյալ տեսակետների համաձայն՝ Եկեղեցին եւ «խորհրդական մարմինը» նույնանում են, բայց տարբերություն է դրվում, երբ անդրադարձ է կատարվում մեղավորների վիճակին: Անզեղջ մեղավորները Եկեղեցու ներսում են, նույնիսկ Եկեղեցու անդամներն են, բայց նրանք խորհրդական մարմնի անդամներ չեն: Կոնգարն այսպես է հանրագումարի բերում Բոնավենտուրայի դիրքորոշումը. «Հստակ է, որ նրա համար «Եկեղեցին» նշանակում է մարմինը, որում եւ որով իրագործվում է փրկությունը, եւ մեկը կարող է դրա անդամ լինել թվային, քանակական իմաստով (numero), մինչդեռ «խորհրդական մարմինը» ենթադրում է միություն Քրիստոսի հետ սիրով եւ համայնքային կյանքն ապրելով: Դրա անդամները նրանք են, ովքեր Եկեղեցու անդամներ են արժանիորեն (merito)»[10]: Մեկ այլ միջնադարյան կաթոլիկ հեղինակ՝ Ալեք-

8 Catéchisme de l'Eglise Catholique, Mame/Plon, էջ 165. Նաեւ՝ The Church, Its Changing Image Through Twenty Centuries, volume one, The First Seventeen Centuries, Eric G. Jay, London, SPCK, էջ 5, 9:

9 The Church, Its changing image through twenty centuries, volume one, էջ 116-117:

10 Անդ, էջ 114:

սանդրը (de Hales) (1170-1245) տարբերակում է Եկեղեցու անդամներին Քրիստոսի անդամներից: Եկեղեցուն անդամակցության համար առաջին բավարար պայման է հավատքը, բայց Քրիստոսի խորհրդական մարմնին անդամագրվելու համար անհրաժեշտ են սերը եւ ձեւավորված հավատքը (fides formata): Հավատքի խորհուրդը (մկրտությունը) սրանալով՝ մեկը կարող է Եկեղեցու անդամ լինել թվի իմաստով (numero), այսինքն՝ լինել միայն բազում անդամներից, թվերից՝ քանակից մեկը: Բայց ձեւավորված հավատքով մեկը կարող է լինել ոչ միայն Եկեղեցու անդամ, այլ նաեւ՝ Քրիստոսի անդամ արժանիքի իմաստով (merito), այսինքն՝ արժանանալով[11]: Կաթոլիկ մեծագույն աստվածաբաններից Փարիզում կրթություն ստացած Թոմա Աքվինացու՝ (1225-1274) Եկեղեցու վարդապետության մեջ նույնպես գերիշխող է Օգոստինոսի եկեղեցաբանությունը: Եկեղեցին խորհրդական մարմին է, որի գլուխը Քրիստոսն է: Աքվինացին համեմատություն է անում մարդկային մարմնի հետ, որի գլուխը կարգուկանոնի կենտրոնն է: Սակայն նա զգուշացնում է, որ դա ավելի շատ նմանություն է, քան ճշգրիտ համապատասխանություն: Մարդկային մարմնի եւ Քրիստոսի խորհրդական մարմնի նմանությունը միանշանակ չէ նրանով, որ մարդկային մարմնի բոլոր անդամները միացած են միմյանց միաժամանակ, մինչդեռ խորհրդական մարմնի անդամները բոլորը միասին չեն, քանի որ Եկեղեցու մարմինը կազմված է մարդկանցից, ովքեր եղել են աշխարհի սկզբից եւ լինելու են մինչեւ դրա վախճանը: Աքվինացին, մեկնելով Ա Տիմ. Դ 10-ը՝ «Փրկիչն է բոլոր մարդկանց, մանավանդ՝ հավատացյալների», ասում է, որ Քրիստոս գլուխն է ողջ մարդկության, բայց ոչ բոլոր մարդկանց նույն ձեւով: Թոմա Աքվինացին հաճախ խոսում է Եկեղեցու մասին՝ որպես societas sanctorum (սրբոց հասարակություն): Մեջբերելով Եփեսացիս Ե 27-ը («փառավորյալ Եկեղեցին արատ կամ աղտեղություն կամ նման բաներ չունի»)՝ Աքվինացին ասում է, որ սա կարող է հասկացված լինել որպես իրականություն երկնքում եւ ոչ երկրի վրա, որտեղ «եթե ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում» (Ա Հովհ. Ա 8)[12]:

Եկեղեցաբանությունը կամ Եկեղեցու մասին վարդապետությունն այլ տեսանկյունով է ներկայացված օրթոդոքսության մեջ[13]: Արեւելյան ուղղափառ եկեղեցաբանության մեջ Եկեղեցին խորհուրդ է, իրականություն, որ տրված է Աստծուց: Իվ Կոնգարը, խոսելով վաղ միջնադարյան շրջանի եկեղեցաբանության մասին, նշում է, որ Արեւելքում բավականին նվազ է Եկեղեցու վերաբերյալ հստակ վարդապետությունը՝ ի տարբերություն արեւմուտքի: Օրինակ Հովհան Դամասկացին (676-787) իր «Ուղղափառ հավատքի մասին» աշխատության մեջ Եկեղեցուն առնչվող ոչ մի գլուխ չունի, այլ միայն՝ դիպվածային անդրադարձներ, որոնք, սակայն, բավական են ցույց տալու, որ նրա համար Եկեղեցին է ողջ քրիստոնեական կյանքը պարուրող իրականություն: Արեւելքում, առավել, քան Արեւմուտքում Եկեղեցին ավելի շատ փաստ է, քան վարդապետություն, փաստ, որն ապրված է եւ որն իրականություն է, որում,

11 Անդ, էջ 115:

12 Անդ, էջ 117-119.

13 Ուղղափառ են այն բոլոր Եկեղեցիները, այդ թվում եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որոնք ունեն անաղարտ հավատք, ճշմարիտ աստվածաբանություն, սակայն սույն ուսումնասիրության շարադրանքում *օրթոդոքս* կամ *օրթոդոքսություն* բառերը գործածված են հիմնականում Հույն, Ռուս եւ այլ Ուղղափառ Եկեղեցիների պաշտոնական անվան նկատառումով:

որով եւ որի համաձայն մեկը քրիստոնյա է եւ հաղորդության մեջ է Աստծո հետ[14]: Ուղղափառ գրողները միջնադարի արեւմտյան աստվածաբանների՝ Եկեղեցու մասին հստակ եւ մեծաքանակ աշխատությունների համեմատությամբ ոչինչ չեն ստեղծել, եւ իզուր է ուղղափառ փաստաթղթերում փնտրել Եկեղեցու մասին այնպիսի հեղինակավոր սահմանումներ, բանաձեւումներ, ինչպիսիք կարելի է գտնել նաեւ բողոքական շատ եկեղեցիների վարդապետություններում[15]: Ուղղափառությունը խոսում է Եկեղեցու մասին որպես տեսանելի եւ անտեսանելի իրականության, բայց արեւմտյան մտքի պես տարբերակում չի դնում Ջինվորյալ եւ Հաղթանակած Եկեղեցու, ոչ էլ ընտրյալ անտեսանելի Եկեղեցու եւ մեղավորների հետ միախառնյալ սրբերի տեսանելի Եկեղեցու միջեւ, ինչն արեւմտյան հեղինակները վերցրեցին Օգոստինոսից եւ ներկայացրեցին առավել մշակյալ կերպով: Ուղղափառները խոստովանում են, որ մեկ Եկեղեցին գոյություն ունի անտեսանելիորեն հանգուցյալ սրբերի եւ հավատացյալների մեջ եւ տեսանելիորեն՝ երկրպագող համայնքի մեջ՝ երկրի վրա: Այս տարբերակումը, սակայն, կատարվում է պարզապես մարդկային տեսակետից: Միայն մեկ Եկեղեցի կա՝ տեսանելի եւ անտեսանելի, երկնային եւ երկրային: Հետեւաբար, երբ մենք խոսում ենք «տեսանելի եւ անտեսանելի Եկեղեցու» մասին, որպես այդպիսին այն նկատի ունենք միայն մարդու հանդեպ հարաբերության մեջ[16]:

Բավականին այլ հունով է զարգացել բողոքականների եկեղեցաբանությունը: Միայն հավատքով արդարանալու վարդապետությունն ուղղակի առնչություն ունի բողոքականության հիմնադիրներից Մարտին Լյութերի (1483-1546) եկեղեցաբանությանը: Կաթոլիկ Սուրբ Եկեղեցին (ecclesia sancta catholica) Լյութերը մեկնաբանում է որպես «քրիստոնեական սուրբ ժողովուրդ», որը նույնն է, ինչ Աստծո ժողովուրդը[17]: Ըստ Լյութերի՝ Եկեղեցին հանդես է գալիս երկու տարբեր անուններով: Առաջինը, որն էական է եւ ճշմարիտ, Լյութերը կոչում է հոգեւոր ներքին քրիստոնեություն, իսկ երկրորդը, որը մարդկանց կողմից է հաստատված եւ արտաքին է, կոչում է ֆիզիկական արտաքին քրիստոնեություն[18]: Ճշմարիտ քրիստոնյաներ լինում են ոչ թե արտաքին Եկեղեցուն անդամության պատճառով, այլ հավատի շնորհիվ, քանզի մարմինը չի հոգուն ողջ պահում, այլ հոգին գոյություն ունի մարմնում, ինչպես եւ առանց մարմնի[19]: Լյութերի գլխավոր թեմաներից մեկն է բոլոր հավատացյալների քահանայությունն ըստ Ա Պետրոս Բ 9-ի. «Դուք ընտիր ցեղ եք, թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ»: Ըստ Լյութերի՝ հիմնավոր տարբերություն չկա աշխարհականների եւ քահանաների, իշխանների եւ եպիսկոպոսների, կրոնավորների եւ աշխարհիկների միջեւ: Որոշ տարբերություն առկա է հանուն ծառայության եւ գործի, բայց ոչ կարգավիճակի համար: Բոլորը ճշմարտապես քահանաներ են,

14 The Church, Its Changing Image Through Twenty Centuries, volume one, էջ 148. Նաեւ՝ ***Yves Congar**, L'Ecclésiologie du Haut Moyen-Age, էջ 324-5. (Հոդվածում *-ով կատարված հղումները վերցված են նշվող գրքերի վկայակոչումներից):

15 The Church, Its changing image through twenty centuries, volume one, էջ 148:

16 Անդ, էջ 151:

17 Անդ, էջ 162-163. Նաեւ՝ ***Luther's Works**, [այսուհետ՝ LW] 55 vols. (St Louis, Missouri; Philadepphia, 1955 ff). General eds. Jaroslav Pelikan and H. T. Lehmann, 41, էջ 148-152:

18 The Church, Its changing image through twenty centuries, volume one, էջ 163. *LW 39, էջ 69-70:

19 Անդ, էջ 164. *The Papacy at Rome, LW 39, էջ 70:

եպիսկոպոսներ եւ պապեր[20]: Բողոքականները շեշտը դնում են sola gratia-ի՝ միայն շնորհի, միայն շնորհով փրկության, Աստծո հետ ուղղահայաց հարաբերության վրա, որից դուրս ոչինչ պատվի արժանի չէ՝ ո՛չ Եկեղեցին, ո՛չ ավանդությունը, ո՛չ խորհուրդները, ո՛չ մարդկային հավատքը: Մարդկանց հորիզոնական հարաբերությունները միայն երկրորդական նշանակություն եւ արժեք ունեն: Բողոքականությունը փրկությունը փնտրում է Քրիստոսի հետ անձնական եւ անմիջական միության եւ ոչ թե Եկեղեցու հետ միավորման մեջ[21]: Ըստ բողոքական հեղինակի՝ վստահություն ունենալ, որ Աստված գործում է անհրաժեշտաբար, որոշակի ձեւով եւ որոշակի պահի, նշանակում է գերազանցել Նրան չլսելու վտանգը, երբ Նա խոսում է, եւ ներշնչվել Նրան ունկնդրելու պատրանքով, երբ Նա չի խոսում[22]: Բողոքական աստվածաբան W. A. Visser't Hooft-ն ասում է, որ ուղղափառությունն իր եկեղեցաբանությամբ խուսափում է հռոմեական կաթոլիցիզմի քահանայապետական, ինստիտուցիոնալ եւ դավանաբանական ծայրահեղություններից: Ինչպես անգլիկանների, այնպես էլ օրթոդոքսների մոտ Եկեղեցին ամենից առաջ հավատացյալների մարմին է, որտեղ նվիրապետությունը կարեւոր դեր է խաղում: Ուղղափառ եւ Անգլիկան Եկեղեցիների միտքը շարժվում է ներքեւից դեպի վերեւ, նրա հիմքը հավատացյալների համայնքն է: Հռոմեական կաթոլիցիզմը գնում է վերեւից դեպի ներքեւ, նրա գագաթը հաստատված է նվիրապետությամբ: Սակայն բողոքական գիտնականի հաստատումներում սխալն այն է, որ Եկեղեցին ամենից առաջ հավատացյալների մարմինը չէ, այլ այն նոր կյանք է Քրիստոսի հետ եւ Քրիստոսի մեջ՝ առաջնորդված Սուրբ Հոգով[23]: Պետք է նշել, որ մինչեւ անցյալ դարի քառասունական թվականների վերջը հիսուն տարիների ընթացքում բավականին փոխվեց բողոքականների դիրքորոշումն Ուղղափառ Եկեղեցու հանդեպ: Ադոլֆ վոն Հառնակի արհամարհանքից եւ ծաղրանքից (ուղղափառությունը միայն ծեսերի հավաքածու է՝ անընդունակ հոգեւոր արարումների) մինչեւ Visser't Hooft-ի համակրանքն ու հիացմունքը նշանակալի փարածություն կա[24]:

Հետաքրքրական է նաեւ Անգլիկան Եկեղեցու եկեղեցաբանության մեջ Եկեղեցու մեկ լինելու վերաբերյալ ուսուցումը, որը ցույց է տրվում առաքելական շրջանի Կորնթոսի Եկեղեցու օրինակով: Կորնթոսում կային մի քանի համայնքներ՝ եկեղեցիներ, սակայն Պողոս առաքյալն այս եկեղեցիները մեկ է համարում՝ իր նամակն ուղղելով «Աստծու Եկեղեցուն, որ Կորնթոսում է» (Ա Կորնթ.Ա 2, Բ Կորնթ. Ա 1): Եկեղեցիների խումբը մեկ է անվանվում, որովհետեւ գտնվում է մեկի գլխավորության ներքո: Նմանապես բոլոր երկրների ազգային բոլոր Եկեղեցիները կարող են մեկ Եկեղեցի ասվել, որովհետեւ բոլորը գտնվում են իշխանության ներքո մեկ գերագույն Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի[25]: Եկեղեցին ունի մեկ գլուխ, որին Հայրը «հաստատեց իբրեւ գլուխ Եկեղեցու, որ Նրա մարմինն է» (Եփ. Ա 22-23): Կորնթոսում

20 Անդ, էջ 165. *To the Christian Nobility of the German Nation (1520), LW 44, էջ 127-9:

21 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 42 :

22 Անդ, էջ 35-36. ***W. A. Visser't Hooft**, Le Catholicisme non-romain, cahiers de «Foi et Vie», mars 1933, Paris, Boulevard Montparnasse, 139 en 8e, էջ 122, in **Dom**. C. Lialine, Orthodoxie à propos d'Œcuménisme dans Irénikon, tome XI, nº 1-2, 1934, էջ 42:

23 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 37. ***Archpr. Serge Boulgakoff,** l'Orthodoxie, էջ 1:

24 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 47:

25 The Church, Its changing image through twenty centuries, volume one, էջ 190:

Եկեղեցին՝ ekklesia-ն, կազմված է ekklesiai-ի քանակից՝ տնային եկեղեցիներից, որը ողջ Եկեղեցին է՝ արտահայտված եւ կենտրոնացած այդ քաղաքում: Դա ekklesia-ն չէ՝ բաժանված ekklesiai-ի[26], այսինքն՝ դա մեկ Եկեղեցին չէ՝ բաժանված տարբեր եկեղեցիների, այլ տարբեր եկեղեցիները ներկայացնում են մեկ Եկեղեցին:

Միջնադարի հայ եկեղեցական հեղինակների աշխատություններն ավելի շատ ներկայացնում են Եկեղեցու վերաբերյալ խորհրդական, այլաբանական մտածումներ ու բացատրություններ, քան համակարգված եկեղեցաբանություն: Սուրբ Գրիգոր Տաթեւացին բացատրում է, որ *Եկեղեցի* բառը հոմանուն է եւ բազում նշանակություններ ունի: Նախ երկու բան է խորհրդանշում՝ շինվածքը եւ շինողը, մեկը՝ բնակություն տվողը, եւ մյուսը՝ բնակյալը, այսինքն՝ միասին ժողովվածները: Եկեղեցին հավաքվածների անուն է, ինչպես Աստված դիմեց Մովսեսին. «Եկեղեցացո[27] զժողովուրդդ ի դուռն խորանին» (Բ Օր. Դ 10)[28]: ԺԹ-Ի դարերում մեր հայ եկեղեցաբանական միտքը կանոնակարգյալ ձեւով ներկայացնելու առաջին լավագույն աշխատանքներից մեկն իրականացրել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, եւ նման փորձ կատարել է նաեւ Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը: Այս երկու հեղինակների աշխատությունները կրում են «Տեղիք Աստուածաբանութեան» վերնագիրը: Եկեղեցին նեղ իմաստով հավատավոր ընտանեկան ժողովն է՝ առտնին Եկեղեցին (Փիլ. Ա 2, Հռ. ԺԶ 5), ընդարձակ իմաստով ցույց է տալիս որեւէ քաղաքի հավատացյալներին (Ա Կորնթ. Ա 2, Ա Թեսաղ. Ա 1, Բ Կորնթ. Ը 1, Գաղ. Ա 2), ավելի ընդարձակ նշանակությամբ՝ ամբողջ ազգի հավատացյալների բազմությունը, առավել լայն իմաստով՝ բոլոր հավատացյալներին, ինչպես նշվում է Պողոսի խոսքի մեջ. «Եւ Նրան հաստատեց իբրեւ գլուխ Եկեղեցու» (Եփ. Ա 22): *Եկեղեցի* բառը ցույց է տալիս նաեւ հոգեւոր իշխանությունը՝ «Ապա թէ եւ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր» (Մատթ. ԺԸ 17), եւ ժողովարանը՝ աղոթքի եւ պաշտամունքի համար հավաքվելու վայրը (Հուդիթ Զ 12,19, Ա Կորնթ. ԺԱ 18): Վերոնշյալի ամփոփումով կարող ենք ասել, որ Եկեղեցին լինում է ընդհանրական, մասնական (ազգային), տեղական, առտնին, նյութական[29]: Մեկ անբաժանելի Եկեղեցու մեջ կան մի քանի մասեր՝ Հաղթական Եկեղեցի եւ Ջինվորյալ Եկեղեցի: Վախճանյալ սրբերի ժողովն է կոչվում Հաղթական Եկեղեցի, այսինքն՝ սա այն Եկեղեցին է կամ այն հավատացյալների հավաքը, ժողովը, որ աշխարհի փորձությունների դեմ պատերազմելով հաղթանակ է տարել, հաղթական է եղել: Հրեշտակների ժողովը եւս Հաղթական Եկեղեցի է կամ Անդրանկաց Եկեղեցի ըստ Սուրբ Գրքի՝ «եկեղեցի անդրանկաց գրելոց յերկինս» (Եբր. ԺԲ 23): Նրանք անդրանիկներ են կոչվում, որովհետեւ մարդկանցից առաջ են հաղթել փորձություններին եւ փառավորվել երկնքում: Հաղթական Եկեղեցու մաս են կազմում նաեւ այն ննջեցյալները, ովքեր Եկեղեցու աղոթքի շնորհիվ կարող են հավիտենական փրկության արժանանալ, նրանց

26 Անդ, էջ 8.

27 Այսինքն՝ հավաքիր:

28 **Գրիգոր Տաթեւացի**, Ձմեռան հատոր, տպեալ յամի 1740 ի Կ. Պոլիս, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1998, էջ 654:

29 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան,** Տեղիք աստուածաբանութեան, Տեսական աստուածաբանութիւն (յերմահու հրատարակութիւն, արտատպուած «Միոն» ամսագրէն 1967-1985), տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1985, էջ 4-5:

Շնորհք եպիսկոպոս Գալուստեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1993, էջ 10:

համար է, որ հոգեհանգստյան արարողություն ենք կատարում: Ջինվորյալ Եկեղեցի է կոչվում հավատացյալների ժողովը, ովքեր տակավին այս աշխարհում պատերազմի մեջ են փորձությունների, չարիքների դեմ եւ պարտավոր են հոգեւոր մարտ մղել, կռվել զինվորյալ բանակների նման[30]: Զինվորյալ Եկեղեցին կազմված է երկու մասից՝ Ուսուցանող Եկեղեցի՝ Եկեղեցու հովիվների ամբողջությունը, եւ Ուսանող Եկեղեցի՝ աշխարհիկ հավատացյալների ամբողջությունը[31]: Բավականին հետաքրքրական է Եկեղեցու համեմատությունը մարդկային կառուցվածքի հետ: Ինչպես մարդն ունի հոգի եւ մարմին, այդպես էլ Եկեղեցու մեջ ոչ միայն գլուխ եւ անդամներ են զանազանվում, այլ նաեւ՝ հոգի եւ մարմին: Եկեղեցու հոգին աներեւույթ Եկեղեցին է՝ բաղկացած Եկեղեցու հոգեւոր եւ գերբնական տարրերից, որոնք են սրբարար շնորհք, հավատք, հույս, սեր եւ այլն, որ Սուրբ Հոգուց աներեւութապես տրված են Եկեղեցուն: Եկեղեցու հոգու մեջ են նախ վախճանված արդարները՝ սրբերը, հրեշտակները: Եկեղեցու հոգու մեջ են նաեւ այս աշխարհում ապրող արդար հավատացյալները: Այն արդարները, ովքեր հետո պիտի կորցնեն արդարությունը, Եկեղեցու հոգու մեջ են այնքան ժամանակ, որքան արդարության մեջ են: Իսկ այն մեղավորները, ովքեր հետո արդարություն պիտի ստանան, Եկեղեցու հոգու մեջ չեն այնքան ժամանակ, քանի դեռ արդարության մեջ չեն: Եկեղեցու մարմինը երեւելի Եկեղեցին է, որի մեջ մտնում են մարդիկ, խորհուրդները, արարողությունները, ծեսերը, եկեղեցական նվիրապետությունը: Եկեղեցու մարմնից չենք կարող մերժել մեղավորներին, ովքեր եւս Եկեղեցու մեջ են ըստ ավետարանական առակների՝ ցորենն ու հարդը միասին են (Մատթ. Գ 12), ծովը նետված ուռկանում մեկտեղված են լավն ու խոտանը (Մատթ. ԺԳ 47-48), հարսանիքին ներկա է նաեւ հարսանիքի զգեստ չունեցողը (Մատթ. ԻԲ 11-12) եւ այլն: Երեւելի եւ աներեւույթ Եկեղեցիներն իրարից անբաժան են, ինչպես հոգին ու մարմինը[32]: Այստեղ նմանություններ կարելի է տեսնել կաթոլիկների, բողոքականների, ուղղափառների ուսմունքների հետ: Հաղթական եւ Զինվորյալ Եկեղեցիների տեսակետը նման է կաթոլիկ հեղինակների արտահայտած տեսակետին: Եկեղեցու հոգուն եւ մարմնին պատկանող Եկեղեցու անդամների մասին բացատրությունները նման են Եկեղեցուն եւ Քրիստոսի խորհրդական մարմնին պատկանելու կամ շնորհի համայնքին եւ շնորհի միջոցներ ունեցող հասարակությանը պատկանելու, քանակապես կամ արժանիորեն Եկեղեցու անդամ լինելու կաթոլիկ ուսուցմանը: Տեսանելի եւ անտեսանելի Եկեղեցիների մասին բացատրությունը նման է Ուղղափառ Եկեղեցու տեսակետին, իսկ Եկեղեցու հոգուն կամ մարմնին պատկանելը՝ Լյութերի՝ հոգեւոր ներքին քրիստոնեության կամ արտաքին ֆիզիկական քրիստոնեության մեջ լինելու ուսուցմանը:

Այսուհանդերձ, մենք չունենք թվարկված Եկեղեցիների՝ սեփական բացառիկության այն դիրքորոշումներն ու վարվող քաղաքականությունը, որ կներկայացնենք ստորեւ: Դեռ ավելին, ըստ Օրմանյանի, եկեղեցական կարեւոր ուսմունքներում բազմազան այլայլումները թույլ չեն տալիս ուղղափառ՝ ճշմարիտ հավատքին անշեղորեն հետեւող համարել այդ

30 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Տեղիք ապրուածաբանութեան, էջ 18-19: **Շնորհք եպիսկոպոս Գալուստեան,** Տեղիք ապրուածաբանութեան, էջ 9:

31 **Շնորհք եպիսկոպոս Գալուստեան,** Տեղիք ապրուածաբանութեան, էջ 9-10:

32 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Տեղիք ապրուածաբանութեան, էջ 18-19: **Շնորհք եպիսկոպոս Գալուստեան,** Տեղիք ապրուածաբանութեան,էջ 10:

Եկեղեցիները, եւ բավական են՝ նրանց վրա հասպարելու այլափառության իմասպը[33]: Մինչդեռ հարկապես Օրթոդոքս՝ Ուղղափառ Եկեղեցիները, *ուղղափառ-orthodox* բառը հասպարագրելով իրրեւ իրենց պաշպոնական անվանման անբաժան մաս, մյուս բոլոր Եկեղեցիներին շապ հաճախ համարում են heterodox - այլափառ, այսինք՝ ճշմարիպ հավապքը կորցրած, ճշմարպությունից շեղված Եկեղեցիներ:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ - Պապմության ընթացքում կայսերական երկրներում կամ կայսրություններում գպնվող Եկեղեցիները (այս պարագային *Եկեղեցի* ասելով նկապի ունենք պվյալ եկեղեցական իշխանությունները եւ նրանց հարողներին) հաճախ ունեցել են այն նվաճողական հարկությունները կամ ձգպումները, որոնք բնորոշ են եղել նաեւ կայսրություններին: Այդ իսկ պապճառով էլ նման դիրքորոշում ունեցող Եկեղեցիներին կարելի է կոչել նաեւ կայսերական (կայսրություն, պիրապեպություն ապեղծելու ձգպում ունեցող) Եկեղեցիներ: Պապմությունից հայպնի է, թե ինչպես էր Բյուզանդական կայսրության Ուղղափառ Եկեղեցին կամ Հռոմեական կայսրության շրջանում Կաթոլիկ Եկեղեցին փորձում իրեն ենթարկել, նվաճել Հայ Եկեղեցին՝ պարբեր առիթներով ապիպելով ընդունելու իր դիրքորոշումները, որով եւ՝ իր գերիշխանությունը: Ուղղափառությունն այսօր էլ գիպակցում է իրեն որպես ճշմարիպ Եկեղեցի, որն ունի եկեղեցական ճշմարպության լիությունը: Այսպեղից նրա հիմնական վերաբերմունքը մյուս դավանությունների նկապմամբ՝ որպես ուղղակիորեն կամ անուղղակիորեն եկեղեցական միությունից շեղվածների[34]: Սեփական բացառիկ ճշմարպացիության նման դիրքորոշում ունի նաեւ Կաթոլիկ Եկեղեցին, եւ բոլոր Կայսերական Եկեղեցիներն իրենց համարում են միակ ճշմարիպը, որին պեպք է միանան մյուս շեղվածները: Ուղղափառ հեղինակը, հասկանալով, որ որեւէ Եկեղեցու նման դիրքորոշումը կարող է առաջ բերել պրոգելիպիզմի՝ հոգեորսության, դավանափոխության կամ իմպերիալիզմի՝ կայսերականության մեղադրանքներ, փորձում է արդարացնել նման պեսակեպը՝ ասելով, որ դա պրոգելիպիզմի կամ իմպերիալիզմի ոգին չէ, այլ հենց իրերի պրամաբանությունն է, քանի որ ճշմարպությունը մեկն է եւ այն չի կարող համեմապվել կիսաճշմարպությունների հետ[35] (հոռեպես լինելու դեպքում կարող ենք եզրակացնել, որ ակնարկվող կիսաճշմարպություններն էլ նաեւ մենք ենք): Ուղղափառներն ի վերուսպ ընկրված են ճշմարպության պահպանության համար[36]: Միեւնույն ժամանակ իր դիրքորոշման մեջ ուղղափառությունն արդարացնող հեղինակը Հռոմեականթոլիկ Եկեղեցուն է մեղադրում եկեղեցական իմպերիալիզմի մեջ[37], եւ կաթոլիկությունը համարում է Վապիկանի միապեպություն[38]: Մինչդեռ ուրիշներին մշպապես սխալ կամ կիսաճշմարիպ հայպարարելը եւ «ճշմարպության պահապանին»՝ ուղղափառությանը միանալու անհրաժեշպությունը քարոզելը եւ նման գիպակցությամբ գործունեություն իրականացնելը եւս միապեպական խաղ է: Խորհրդային հասարակարգի ժամանակաշրջանում պապմական ուղղափառության ճգնաժամը կապվում էր ռուսական հեղափոխության եւ ռուսական ուղղափառ թագավորության անկ-

33 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան,** Տեղիք աստուածաբանութեան, էջ 65:
34 **Сергей Булгаков,** Православие, издательство Фолио, Москва, 2001, էջ 262.
35 Անդ:
36 Անդ:
37 Անդ:
38 Անդ, էջ 265:

ման հետ, որն իր նշանակությամբ կարելի է նմանեցնել միայն Բյուզանդիայի անկման եւ թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման հետ: Եւ ինչպես այն ժամանակ Բյուզանդական կայսրությանը որպես փոխարինող Աստված վեր հանեց Ռուսական թագավորությունը, այնպես էլ այժմ Աստված ի զորու է վեր հանելու ուղղափառությանը նոր ամրության[39]: Զարմանալի է, որ ուղղափառության վերոնշյալ դիրքորոշումը բնութագրվում է որպես ոչ իմպերիալիզմ, իսկ անմիջապես դրանից հետո ուղղափառության զորությունը, հաղթանակները, ձեռքբերումները կամ ձախողումներն ուղղակիորեն կապվում են կայսրությունների ծաղկման կամ դրանց անկման հետ: Բյուզանդական կայսրության անկումից հետո Ռուսական կայսրությունում ուղղափառության ծաղկման առնչությամբ Մոսկվան բնութագրվում է որպես երրորդ Հռոմ[40]:

Ակնհայտ փոխհարաբերություններ գոյություն ունեն Բյուզանդական կայսրության եւ եկեղեցական □kumՌոռ հասկացության միջեւ[41]: Կայսրության ներքին միության քաղաքական իրականությունը սերտորեն կապված էր ուղղափառության համընդհանուր կառուցվածքի հետ: Այսպիսով՝ Եկեղեցու տիեզերականության գաղափարը հենվում է ոչ միայն առաքելական եւ հաղորդական (eucharistique) իրականության, այլ նաեւ համընդհանուր մշակույթով հասարակության գոյության եւ պետության կայսերական չափի վրա: Տեղական եւ տիեզերական միության համընդհանուր կառուցվածքները հավասարապես ազդված եւ գործածված են պետության կայսերական քաղաքականության կողմից: Եկեղեցական ժողովները հրավիրվում էին կայսրերի կողմից, եւ դրանց որոշումները հրապարակվում էին որպես կայսերական հրովարտակներ: Ուղղափառության միսսիոներական հաղթանակը հաճախ համընկնում էր բյուզանդական կայսրերի քաղաքական հաղթանակի հետ, իսկ ժողովների կողմից դատապարտված հերետիկոսները հաճախ կայսրությունից դուրս ապրող քրիստոնյաներ էին[42]:

Կաթոլիկ Եկեղեցում միջնադարում պապը կարծես դարձել էր այս աշխարհի իշխաններից մեկը: Գրիգոր Յոթերորդ պապը գրում էր. «Միայն պապը կարող է գործածել կայսերական նշաններ»[43], «պապը միակ մարդն է, ում առջեւ խոնարհվում են բոլոր իշխանները»[44], հայտարարություն, որը հիշեցնում է Սուրբ Գրքի նախադասության աղավաղված ձեւը. «Ինձ կրկնեսցի ամենայն ծունր» (Եսայի ԽԵ 23, Հռոմ. ԺԴ 11): Հռոմի գերագահության գաղափարի հիմնական ձեւավորողները եւ առաջ տանողները եղել են պապերն իրենք, ովքեր ուրվագծել են այն աստվածաբանությունը, որի վրա հիմնված է այս գաղափարը: Պապ Լեւոն Առաջինը՝ Քաղկեդոնի 451 թ. ժողովում ընդունված Տոմարի հեղինակը, համակարգել է իր նախորդների տեսակետները եւ հաստատել առաջին հիմնավոր վարդապետությունը

39 Անդ, էջ 268:

40 **Н. Бердяев**, Русская идея, Харьков, «Фолио», Москва, «АСТ», 1999, էջ 17, 19, 187, 207:

41 **M. A. Costa de Beauregard, Père Ion Bria**, Théologi de Foucaould, L'Orthodoxie hier-demain, collection «Deux Milliard de Croyants», dirigée par Georges Richard-Molard, Edition Buchet/Chastel, Paris, էջ 225. *Pierre L'Huillier, L'expérience politique de l'Orthodoxie dans le volume «Les chrétiens et l'Etat», Mame, 1967, էջ 62-125, նույնի Le Saint Patriarche Photius et L'unitn chrntienne, in «Messager de l'exarchat du Patriarcat russe en Europe Occidentale», nº 22, 1955 :

42 **M. A. Costa de Beauregard, Père Ion Bria**,նշված աշխ. էջ 225:

43 Անդ, էջ 59:

44 Անդ, էջ 57:

պապության վերաբերյալ: Ըստ այդ վարդապետության՝ Քրիստոս ընտրեց մեկ մարդու՝ Պետրոսին, եւ նրան տվեց առաջնայնություն, գերազանցություն առաքյալների եւ Եկեղեցու բոլոր հայրերի վրա: Այսպիսով, չնայած շատ եպիսկոպոսներ եւ հովիվներ կան Աստծո ժողովրդի մեջ, Պետրոսն է ըստ էության ղեկավարում բոլոր նրանց: Քրիստոսի խոսքերը Մատթեոսի Ավետարանում (ԺԶ 8)՝ «Դու վեմ ես, եւ այդ վեմի վրա պիտի շինեմ Իմ Եկեղեցին», վերաբերում են հենց Պետրոսին եւ ոչ թե նրա հավատին: Պետրոսը Հռոմի առաջին եպիսկոպոսն էր, եւ նրա գերազանցությունը ողջ Եկեղեցու վրա փոխանցվում է Հռոմի հաջորդ եպիսկոպոսներին, ովքեր այսպիսով Պետրոսի փեղապահներն են եւ նրա ժառանգորդները: Քրիստոսի կողմից իշխանությունը տրվեց Պետրոսին եւ այն փոխանցվում է մյուս առաքյալներին Պետրոսի միջոցով: Հետեւաբար, մյուս եպիսկոպոսների հեղինակությունը գալիս է ոչ թե անմիջականորեն Քրիստոսից, այլ Հռոմի եպիսկոպոսի միջոցով, նաեւ նրա լեգատը եկեղեցական ժողովներում առաջինն է համարվում: Այսպիսով, Հռոմի եպիսկոպոսն է, որ Եկեղեցում ունի իշխանության լիությունը (plenitudo potestatis): Նման հավակնություններ կան Լեւոնի բազմաթիվ ընդարձակ քարոզներում եւ գրություններում: Դրանց ամենահամակարգված տարբերակը չորրորդ քարոզն է եւ տասնչորսերորդ նամակը[45]: Հետաքրքրական է, որ ուղղափառները, ընդունելով Լեւոնի քրիստոսաբանությունը, համաձայն չեն նրա եկեղեցաբանական այս տեսակետներին, մինչդեռ եթե այդ անձը սրբացվում է տվյալ Եկեղեցու կողմից, եւ նրա ասածը կարեւոր դերակատարություն ունի հատկապես հավատքի հիմնավոր հարցերում, զավեշտալի է նրա ուսմունքի մի մասն ընդունելը, մյուսը՝ ոչ, կամ մի մասը ճիշտ համարելը, մյուս մասը՝ ոչ: Հռոմեականթոլիկները շարունակում են հաստատել, որ Հռոմի եպիսկոպոսը տիեզերական առաջնայնություն ունի եւ որ filioque-ի (Սուրբ Հոգու նաեւ Որդուց բխումը) ավելացումը հավատո հանգանակի մեջ նշան է քրիստոսաբանության զարգացման[46]: Վատիկանի առաջին ժողովը 1870 թ. վերոնշյալ դիրքորոշումով ամենայն մանրամասնությամբ մշակել էր պապական կարգավիճակի եւ հեղինակության վերաբերյալ ուսմունքը[47], որն իհարկե անընդունելի էր մյուս Եկեղեցիների կողմից: Եւ ահա Կաթոլիկ Եկեղեցու տիեզերական կոչվող քսանմեկերորդ ժողովը՝ Վատիկանի երկրորդ ժողովը (սկսված 1962-ին Հովհաննես 23-րդ պապի օրոք, ավարտված 1965 թ. Պողոս Վեցերորդ պապի օրոք) ուղղեց եւ ձեւափոխեց Վատիկան առաջինի պապության վերաբերյալ սահմանումները: Պետրոսի քահանայությունը դիտվեց որպես քահանայություն եւ ոչ գերիշխանություն, պապը համարվեց «ողջ Եկեղեցու հովիվ», փոխանակ «Եկեղեցու գլխի»[48]: Սակայն Վատիկան երկրորդն այս ամենով հանդերձ մնացել է պապի գերագահության դիրքորոշմանը հավատարիմ[49]: Եւ Կաթոլիկ Եկեղեցու ու պապի գերագահության այս դիրքորոշումներով են հաճախ հանդես գալիս Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներն էկումենիկ համագումարների, ժողովների ընթացքում: Կաթոլիկ Եկեղեցին ի սկզբանէ չի մասնակցել էկումենիկ շարժմանը եւ անդամ չէ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի: Դեռեւս 1919 թ. Հռոմի Կաթոլիկ Եկեղեցուն ուղղված էկումենիկ համաշխարհային համագումարին մասնակցելու Բենե-

45 The Church, Its changing image through twenty centuries, էջ 97-98:
46 **M. A. Costa de Beauregard, Père Ion Bria,** էջ 254:
47 The Church, Its changing image through twenty centuries, էջ 190:
48 Անդ, էջ 191:
49 Անդ, էջ 100:

դիկտոս 15-րդ պապի հրավերից երևում է, որ նրա համար Եկեղեցու միությունը նշանակում էր պապության ընդունում[50]: Իսկ Պիոս 11-րդ պապը 1928 թ. հունվարի 6-ի Mortalum animos կոնդակով նույնիսկ արգելել է կաթոլիկների բոլոր հարաբերություններն էկումենիստների հետ: Կոնգարը բերում է էկումենիկ շարժմանն ամբողջականորեն չմասնակցելու Կաթոլիկ Եկեղեցու պատճառները: Կաթոլիկ Եկեղեցին գիտի, որ ունի առաքելության, միության եւ լիության շնորհը: Հռոմեակաթոլիկ Եկեղեցին բացառապես Սուրբ Հոգուց է սպասում քրիստոնյաների վերադարձը դեպի միություն: Լինելով լիություն, ամբողջություն՝ կաթոլիցիզմը չի կարող մտնել մի քանի էկումենիկ համագումարների խաղի մեջ, որովհետեւ այդ խաղը մասերի խաղ է, մինչդեռ ինքն ամբողջությունն է[51]: Իսկ վերջին տարիներին անգլիկաններին դեպի կաթոլիկություն հրապուրելու Բենեդիկտոս 16-րդ պապի զարմանալի ջանքերը, ինչպես նշում է կաթոլիկ հայտնի աստվածաբան Հանս Կյունգը, ցույց են տալիս, որ Հռոմի պապը հստակորեն որոշել է վերականգնել Հռոմեական կայսրությունը: «Ինչպես մենք տեսել ենք դարերի ընթացքում, ԺԱ դարի արեւելք-արեւմուտք եկեղեցական խզման, ԺԶ դարի Ռեֆորմացայի եւ ԺԹ դարի Վատիկանի առաջին ժողովի մեջ, իշխանության հռոմեական ծարավը բաժանում է քրիստոնեությունը եւ վնասում իր սեփական Եկեղեցուն: Դա ողբերգություն է»,- եզրակացնում է աստվածաբանը[52]:

Երբեմնի Բրիտանական հսկայածավալ կայսրության ներկայիս պաշտոնական Անգլիկան Եկեղեցին էլ, որոշ կարծիքներով, հավակնում է Կայսերական Եկեղեցի լինելու իր դերին: Բավականին հետաքրքրական են Ի դարում արտահայտված հետեւյալ կարծիքները: Էկումենիզմն ի հայտ եկավ ԺԹ դարի կեսերին Անգլիայում եւ Ամերիկայում: Այդ քրիստոնեական էկումենիզմն անկասկած դուրս է եկել անգլիական հումանիզմից եւ Բրիտանական կայսրության ունիվերսալիզմից: Բայց հավանաբար անգլիկանիզմի էկումենիկ դիրքորոշումը գալիս է նաեւ անգլիացի ժողովրդի հոգեբանական գծերից[53]: Ոմանք մեծ պնդումներով հաստատել են, որ էկումենիկ շարժումը մի պարզ գործիք է Անգլիկան Եկեղեցու ձեռքին, որը բողոքականության եւ ուղղափառության տկարացումից հետո իրեն ներկայացնում է որպես Վատիկանի միջազգային ամենամեծ մրցակից: Անգլիական իմպերիալիզմն իր ողջ ուշադրությունը բեւեռում է կրոնական այս շարժման վրա, որը պիտի դարձնի քաղաքական միջոց՝ գործադրելու իր էկումենիկ առավելություններն արեւելքում[54]: Ակնհայտորեն սրանք միայն պարզ ակնարկներ չեն: Անգլիացի պետական այրերը միշտ հաշվի են նստել էկումենիկ շարժման հետ, որում Անգլիայի պաշտոնական Եկեղեցին այսպիսի մեծ դեր է խաղում[55]: Անգլիկան Եկեղեցու միջոցով բրիտանական քաղաքականության միջամտությունը Մերձավոր Արեւելքի ուղղափառության գործերում բավականին վաղ ժամանակներից է գա-

50 The Church, Its changing image through twenty centuries, volume two, 1700 to the present day, էջ 95:

51 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 51-52. *Les grandes Conférences œcuméniques et l'abstention de l'Eglise Catholique, Le mouvement œcuménique dans problèmes de l'œcuménisme, I, էջ 46, 50; Նույնի Chrétiens désunis, էջ 171, 180:

52 **Hans Kung,** The Vatican Thirst for Power Divides Christianity and damages Catholicism, guardian.oc.uk, Tuesday, 27 October, 2009 (համացանցային կայքէջից):

53 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 7:

54 Անդ, էջ 48. *Max Pribilla, Um Kirchliche Rinheit, Stockholm-Lausanne-Rom, էջ 34:

55 Actes de la Conférence des chefs et des représentants des Eglises Orthodoxes autocéphales, էջ 48. ***Gaston Gaillard**, La fin d'un temps – Au seuil d'un nouvel âge, Paris, Edition Albert, 1932, էջ 79-129:

լիս: Անգլիկան Եկեղեցին, որ անցյալ դարից սկսյալ մեծ աշխատանքներ էր իրականացնում ուղղափառության հետ մերձենալու եւ միանալու համար, երբեք չի թաքցրել իր համակրանքը հույն ուղղափառության հանդեպ, որը մեծ դեր է խաղացել բրիտանական քաղաքականության մեջ, եւ Անգլիան չէր կարող նրան չքաջալերել սերտ հարաբերություններով, քանի որ Հույն Եկեղեցին ծառայում էր իր արեւելյան քաղաքականությանը եւ պաշտպանում իր հայացքները Արեւելքի հետ կապված հարցերում[56]: Բրիտանական քաղաքականությանը մեծապես հետաքրքրում է ուղղափառ Կոստանդնուպոլիսը, որը, որպես ուղղափառության Աթոռ, անգլիկանիզմի հետ դաշնակցությամբ կարող էր կրկին հանդես գալ Հռոմին դեմ հանդիման, ինչն օգուտ կբերեր Բրիտանական քաղաքականությանը Թուրքիայի հետ կապված հարցերում, որի վերջնական կործանմանը ձգտում էր Անգլիան հունաթուրքական պատերազմի ընթացքում[57]: Եւ Անգլիան այսօր շարունակում է այդ քաղաքականությունը Անգլիկան Եկեղեցու միջոցով՝ այս անգամ էկումենիկ շարժման քողի տակ: Անկասկած, այդ քաղաքականությունը բավականին նուրբ է, սակայն միեւնույն ժամանակ՝ զորեղ եւ համառ[58]:

ՇՆՈՐՀԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - 2006 թ. փետրվարի 14-23-ը Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում կայացավ «Աստված, Քո շնորհով փոխակերպիր աշխարհը» խորագրով ԵՀԽ 9-րդ համաժողովը: Զեկույցներում խոսվում էր Աստծո շնորհով աշխարհի, եկեղեցիների, հասարակությունների, մարդկային կյանքի փոխակերպման մասին՝ հաստատումով, որ Սուրբ Հոգու շնորհներն ի զորու են բարելավելու մարդկային կյանքը տարբեր ոլորտներում: Սակայն որքան էլ զարմանալի է, այս համաժողովի զեկույցներին ճիշտ հակառակ են եղել կամ ներկայումս էլ հակառակ են մասնակիցների ներկայացրած Եկեղեցիների աստվածաբաններ կամ հոգեւորականներ (ի տարբերություն Հայ Առաքելական Եկեղեցու, որը նման հավակնություններ չի ներկայացրել)՝ Սուրբ Հոգու փրկարար շնորհները վերագրելով միմիայն իրենց, կամ այլ կերպ ասած՝ զբաղվելով աստվածային շնորհների կամայական սեփականաշնորհմամբ: Դոնատիստների հետ բանավեճում Օգոստինոսի առաջ քաշած տեսակետով Կաթոլիկ Եկեղեցուց բաժանված քրիստոնեական խմբերում Սուրբ Հոգին չի գործում, որով էլ եւ նրանց խորհուրդներն արդյունավետություն չունեն եւ նրանց կյանքը զուրկ է շնորհից, կարծիք, որ տարածված էր հռոմեականաթոլիկների մոտ մինչեւ վերջին ժամանակները[59]: Սակայն հետագայում Կաթոլիկ Եկեղեցին փոխեց իր դիրքորոշումը՝ հայտարարելով, որ այն քրիստոնյաները, ովքեր հաղորդության միություն չեն պահպանում Պետրոսի հաջորդի հետ, միացած են Կաթոլիկ Եկեղեցուն Սուրբ Հոգով, քանի որ Նա [Հոգին] նրանց եւս տալիս է Իր պարգեւները ու շնորհները եւ գործում է նրանց մեջ Իր սրբարար զորությամբ[60]: Հետաքրքրական է՝ ԵՀԽ-ն կոչ է անում, որ այդ համաեկեղեցական կազմակերպության անդամ Եկեղեցիները կարող են կամ չեն կարող դիտել այլ անդամ եկեղեցիներին որպես Եկեղեցի այդ բառի լրիվ իմաստով, բայց նրանք ընդունում են նրանց՝ որպես նույն Տիրո-

56 Actes de la Conférence, էջ 48-49. ***Gaston Gaillard**, նշվ. աշխ., էջ 251:

57 Actes de la Conférence, էջ 49. *Gaston Gaillard, նշվ. աշխ., էջ 251:

58 Actes de la Conférence, էջ 49. * **Max Pribilla**, էջ 34:

59 The Church, Its changing Image, էջ 99:

60 Անդ, էջ 99: *Dogmatic Constitution on the Church, II, էջ 15, 34: - Այս փաստաթուղթը ճանաչված է նաեւ Lumen Gentium անունով, որ նշանակում է՝ Լույս բոլոր ազգերի:

ջը ծառայողների եւ «ճշմարիտ Եկեղեցու փարքեր ունեցողների»[61]: Դեռեւս երրորդ դարում Կարթագենի եպիսկոպոս Կիպրիանոսի կողմից արտահայտված Extra Ecclesiam nulla salus (Եկեղեցուց դուրս փրկություն չկա) բանաձեւը մնում է վավերական, նույնիսկ եթե իրական խորհուրդներ նույնպես կան Եկեղեցուց դուրս[62]: Այսինքն՝ դուռ է բացված վիճարկումների համար, թե որն է իրական Եկեղեցին, եւ որոնք են, որ միայն ճշմարիտ Եկեղեցու փարքեր են պարունակում եւ կամ իրական խորհուրդներ ունեն Եկեղեցուց դուրս: Ուղղափառ Եկեղեցին իրեն համարում է ճշմարիտ Եկեղեցի, բայց նա հավատում է, որ Աստծո շնորհը կարող է գործել նաեւ այլ Եկեղեցիների մեջ, եւ որ միայն միացյալ Եկեղեցիների ամբողջականությունն է, որ իր ողջ լիության մեջ ներկայացնում է Քրիստոսի մարմինը[63]: Սակայն սա հիմնականում լիբերալ ռուս դոգմատիստների եւ ոչ թե եկեղեցական հեղինակությունների կարծիքն է: Կաթոլիկները հայտարարում են, որ սրբացման եւ ճշմարտության շատ փարքեր գոյություն ունեն Կաթոլիկ Եկեղեցու տեսանելի սահմաններից դուրս, որ գալիս է շնորհի եւ ճշմարտության լիությունից, որ Քրիստոս շնորհել է Կաթոլիկ Եկեղեցուն[64]: Եւ մինչ կաթոլիկներն իրենց միջոցով են ուրիշներին շնորհների արժանացածներ համարում, ուղղափառ եկեղեցական շրջանակներից բիսող դիրքորոշումները պարզապես ապշեցնում են ներկայացվող մոլեռանդ եւ ծայրահեղ տեսակետներով: Պարզվում է, որ Ուղղափառ Եկեղեցուց դուրս այլ Եկեղեցիներում կան որոշ շնորհներ, որոնք մղում են բարեպաշտության, աստվածսիրության, սակայն դրանք փրկարար շնորհներ չեն, քանզի փրկություն կարելի է ստանալ միայն ճշմարիտ Եկեղեցում՝ Ուղղափառության մեջ: Եւ այս տեսակետն այսօր տարածում է նաեւ ռուսական աստվածաբանական կրթական հաստատություններում ապագա ռուս հոգեւորականներին կրթող աստվածաբանության դասախոս, սարկավագ Անդրեյ Կուրաեւը: Նա նույնիսկ նշում է, որ իր կողմից միայն ենթադրելի է ոչ ուղղափառների մոտ վավերական խորհուրդների կատարման հնարավորությունը, իսկ որոշ շնորհների ենթադրյալ առկայությունը, միեւնույն է, բավարար չէ փրկության համար, եւ Ուղղափառ Եկեղեցին պնդում է, որ իր Խորհուրդներից դուրս փրկություն չկա[65]: Ուղղափառության մեջ շատերն են այն կարծիքին, որ ուղղափառությունից դուրս շնորհի փոխանցության գոյության ընդունումը ուղղակիորեն բերում է երկու զուգահեռ ճանապարհների ուսմունքին՝ մակրոեկեղեցիներ, որ ուղղափառությունն է՝ ճանապարհ ծածկված գրանիտով, եւ միկրոեկեղեցիներ, որ այլ դավանություններն են ու աղանդները՝ արահետներ ծածկված մոլախոտերով, եւ քրիստոնեություն ասելով՝ պետք է հասկանալ Ուղղափառությունը[66]: Ուղղափառությունը Քրիստոսի Եկեղեցին է երկրի վրա[67], Ուղղափառությունը հենց ինքը Եկեղեցին է իր ճշմարտության մեջ[68]: Մարդկային ողջ ցեղը չի մտնում Եկեղեցու մեջ, այլ միայն՝ ընտրյալները, եւ նույնիսկ ոչ բոլոր քրիստոնյաներն

61 The Church, Its Changing Image, volume II, էջ 87:

62 Actes de la Conférence, էջ 31:

63 Անդ, էջ 37:

64 Catéchisme de l'Eglise Catholique, էջ 181:

65 **Диакон Андрей Кураев,** О книге о. Рафаила "Вызов новомодернизма", из книги: **Диакон Андрей Кураев** "О нашем поражении". Изд-во "Святоляр". Фонд "Благовест". С.-Перербург, 1999 (www.wco.ru/biblio/index.htm, Библиотека православного христианина):

66 **Архимандрит Рафаил**, Вызов новомодернизма (նույն կայքէջից):

67 **Сергей Булгаков**, Православие, էջ 7:

68 Անդ, էջ 264:

են լիության մեջ պատկանում ճշմարիտ Եկեղեցուն, այլ միայն՝ ուղղափառները[69]: Նման հայտարարություններում կարծես արտացոլվում է Էկումենիզմին մասնակից Եկեղեցիների չհրապարակված պաշտոնական տեսակետը:

Բողոքականները փրկության համար Եկեղեցուն անդամագրվելուց ավելի կարեւոր են համարում Աստծո հետ հավատացյալի անմիջական կապը եւ անկարեւոր, նույնիսկ ավելորդ եկեղեցական նվիրապետությունը, խորհուրդները, ծեսերը եւ Լյութերի ուսմունքին համաձայն պնդում են, որ Աստծո շնորհները տրվում են Աստծո խոսքի քարոզչությամբ ու ոչ թե ձեռնադրված քահանայի աղոթքով, արարողությամբ եւ կամ եկեղեցական ծեսով:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ - Շնորհների մասին այս տարբեր ուսմունքներով հանդերձ էկումենիզմի շրջանակներում Եկեղեցիներն ընդունում են միմյանց մկրտության խորհրդի վավերականությունը: Մկրտված, Քրիստոսին անդամագրված ոչ կաթոլիկները լիիրավ կերպով կրում են քրիստոնյա անունը, եւ Կաթոլիկ Եկեղեցու զավակները նրանց ճանաչում են որպես Տիրոջով եղբայրների[70]: Նաեւ Վատիկանի ժողովի էկումենիզմի դեկրետն ընդունում է մկրտված քրիստոնյաներին՝ որպես ի Քրիստոս եղբայրների Կաթոլիկ Եկեղեցու զավակների համար[71]: Խորհրդակատարության ուժը կապված է քահանայության հետ, որտեղ չկա քահանայություն, այնտեղ չկան եւ խորհուրդներ՝ բացի մկրտությունից[72]: Մկրտության խորհուրդը միակն է, որ քահանայի բացակայության դեպքում կարող է կատարվել աշխարհականի կողմից (տղամարդու կամ նույնիսկ կնոջ) համընդհանուր քահանայության զորությամբ: Ոչ քրիստոնյայի կողմից կատարվող մկրտությունը վավերական չէ, ինչպես դա ընդունում է հռոմեական կաթոլիցիզմը, քանի որ այն Եկեղեցու շնորհատու գործողություն է եւ ոչ թե մոգական ակտ: Կատարման ձեւ է հանդիսանում երեք անգամ սուզումը հանուն Սուրբ Երրորդության եւ ոչ թե միայն Հիսուսի անունով, ինչպես դա թույլատրված է եղել կաթոլիկության մեջ Նիկոլայ Ա պապի կողմից բուլղարների առնչությամբ: Յուրաքանչյուր քրիստոնեական մկրտություն Սուրբ Երրորդության անունով վավերական է ոչ միայն ուղղափառության սահմաններում, այլեւ նրա սահմաններից դուրս, ինչը հայտնի է ինչպես հին, այնպես էլ ժամանակակից Եկեղեցու գործունեությունից, որը մեկ անգամ մկրտվածին չի վերամկրտում՝ բացի մասնահատուկ բացառություններից[73]: Մեր Եկեղեցու ուսուցմամբ եւս ընդունելի եւ վավերական է բացառիկ հանգամանքներում քրիստոնյա աշխարհականի կողմից Սուրբ Երրորդության անունով կատարվող մկրտությունը: Սակայն հարկ է նշել, որ ավետարանական տարբեր տեքստերում կամ տարբեր Եկեղեցիների կողմից ընդունված Սուրբ Գրքի պաշտոնական տարբերակներում կան տարբերություններ Քրիստոսի՝ Սուրբ Երրորդության անունով մկրտություն կատարելու պատվիրանը ներկայացնող նախադասության մեջ. «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց **մկրտեցե՛ք** Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով»: Ի տարբերություն հայերեն բնագրի՝ այլ լեզուներով հրատարակված Սուրբ Գրոց համապատասխան հատվածում *մկրտել* բայը ներկայանում է ոչ թե հրամայական ձեւով, այլ դերբայով. «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր

69 Անդ, էջ 18:
70 Catéchisme de l'Eglise Catholique, էջ 180:
71 The Church, Its changing Image, volume II, էջ 104: *Decree on Ecumenism, i, 3, էջ 345:
72 **Сергей Булгаков**, Православие, էջ 160:
73 Անդ, էջ 161:

ազգերին՝ նրանց **մկրտելով** Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով»: *Մկրտել* բայը դերբայական ձեւով է հանդես գալիս տարբեր լեզուների Աստվածաշնչի դասական տարբերակներում[74]: Սակայն կան մի քանի այլալեզու թարգմանություններ, որտեղ *մկրտելը* հրամայական է[75], եւ հակառակը, հայերեն թարգմանության մեջ, որտեղ տվյալ բայը հիմնականում հրամայականով է, հանդիպում են մի քանի նոր հրատարակություններ, ուր *մկրտելով* ձեւն է ներկայացվում[76]: Բայի *ելով* վերջավորությամբ ձեւն արտահայտում է արդի հայերենի ութ դերբայներից անորոշ դերբայը, որը համապատասխանում է գրաբարի անցյալ դերբայի ձեւերին: Գրաբարի անցյալ դերբայի գործառական իմաստներին որոշ չափով անդրադարձել է պրոֆեսոր Պետրոս Բեղիրյանն իր «Լեզու նախնեաց» գրքում: Նա նշում է, որ անցյալ դերբայն արտահայտում է անորոշ դերբայի գործիականի, հարակատար դերբայի, դիմավոր բայի իմաստներ[77]: Անցյալ դերբայն անորոշ դերբայի գործիական հոլովով ցույց է տալիս գործողության կատարման ձեւ: Հետեւաբար, նաեւ Քրիստոսի պատվիրանի իմաստն է փոխվում բայի հրամայական ձեւով եւ կամ անորոշ դերբայով հանդես գալու դեպքում: *Մկրտելով*-ի պարագային նախադասության իմաստի մեջ առաջնային է դառնում աշակերտներ պատրաստելը, եւ մկրտելը պարզապես դառնում է միջոց աշակերտներ պատրաստելու: *Մկրտելով* ձեւը մեծապես ձեռնտու է բողոքականներին հատկապես մանուկներին չմկրտելու վերաբերյալ հիմնավորումներ գտնելու համար: Քանի որ Քրիստոս պատվիրում է աշակերտներ պատրաստել մկրտելով, այսինքն՝ արարողության կատարման միջոցով, ապա սա ցույց է տալիս, որ պատվիրանը չի վերաբերում մանուկներին, քանի որ երեխան չի կարող ուսուցված լինել եւ, հետեւաբար, չպետք է մկրտվի[78]: Եւ զարմանալի չէ, որ ավետարանական այս նախադասության մեջ նախընտրելի է եղել *մկրտելով* ձեւի գործածումը հայերեն բողոքական հրատարակություններում[79]: Էկումենիկ շարժմանը զուգահեռ ի հայտ եկան Սուրբ Գրքի էկումենիկ թարգմանությունները՝ կատարված տարբեր Եկեղեցիների մասնագետների միասնական աշխատանքով, որոնցում զգալի դեր է խաղում Բողոքական

74 King James Version, Louis Second, Vulgata, ինչպես նաեւ հունարեն եւ ռուսերեն տարբերակներում (βαπτιζοντες, крестья):

75 La Saint Bible, traduite d'après les textes origineaux hébreu et grec, Nouvelle Version Segond Revisée, Alliance Biblique Universelle, 1999:

Bonne Nouvelle aujourd'hui, Le Nouveau Testament traduit en français courant d'après le texte grec, première edition, edité par les Sociétés Bibliques:

Good News Bible, with deuterocanonical Books/Apocrypha, today's English Version, The Bible Societies, Collins/Fontana:

The New Jerusalem Bible, Doubleday Company.INC, Garden City, New York:

76 Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 1999:

Աւետարան Յիսուսի Քրիստոսի, աշխարհաբար թարգմանութիւն Շնորհք պատրիարք Գալուստեանի, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1979:

77 Պետրոս Բեղիրյան, Լեզու նախնեաց, 2-րդ հրատ., Ս. Էջմիածին, 2000, էջ 148:

78 A Commentary on the Holy Bible by various writers, edited by The Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Camgridge, complete in one volume with general articles, New York, The Macmillan company, էջ 721:

79 Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, թարգմանեալ եբրայական եւ յունական բնագրից, Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, տպագրեալ արդեամբ եւ ծախիւք Բրիտանական եւ Արտաքին Ընկերութեան Աստուածաշունչ գրոց, 1883:

Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեանի տպարանումը, տպագրուեցաւ Աստուածաշունչի Բրիտանական եւ Արտաքին Ընկերութեան ծախսովը, 1896:

Եկեղեցին: Եւ խնդրո առարկա բառը *մկրտելով* ձեւով է Աստվածաշնչի էկումենիկ թարգմանության մեջ[80]: Ըստ բողոքականների՝ հունարեն բնագիր տեքստում Մատթեոսի Ավետարանի 28-րդ գլխի 18-20 տների հիմնական բայը *պատրաստել*-ն է, այսինքն՝ աշակերտներ դարձնելը, մյուս բայերը՝ *մկրտել* եւ *սովորեցնել*, օժանդակ բայեր են: Կարեւորագույն մասը՝ մեծ հանձնարարությունը, աշակերտներ պատրաստելն է եւ ապա մկրտելը[81]: Հարցը, թե արդյոք պե՞տք է մկրտել երեխաներին, թե՞ միայն նրանց, ովքեր նախապես սովորել են քրիստոնեական ճշմարտությունները, վերաբերում են գործնական ասպվածաբանությանը, մինչդեռ, Մատթ. ԻԸ 19-ը դիտարկելով մեկնողական տեսակետից, պարզ է դառնում, որ այն ընդհանուր իմաստ ունի. հստակորեն չի նշվում՝ պետք է նախապես սովորեցնե՞լ եւ հետո մկրտել, թե՞ հակառակը եւ կամ էլ այս երկուսը կատարել միաժամանակ: Քրիստոսի պատվիրանի նպատակն է մարդկանց բերել Իր Արքայության՝ մկրտելով եւ սովորեցնելով, սովորեցնելով եւ մկրտելով[82]: Այսպիսով, էկումենիկ շրջանակներում միմյանց մկրտություններն ընդունելու սիրալիր հայտարարությունների ետեւում մնում են անհամաձայնություններն ու տարբերությունները մկրտության ներգործության, փրկության համար մկրտության անհրաժեշտության, մանուկների մկրտության եւ նմանատիպ այլ հարցերի առնչությամբ:

ՈՎ Է ՄԵԶԱՆԻՑ ԱՌԱՋԻՆԸ - Ուղղափառությունը կարծես թե առաջնորդող դեր է փորձում ստանձնել էկումենիկ շարժման, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կազմակերպության մեջ այն հաստատումով, որ էկումենիզմը ոչ միայն բողոքականությունից սկսված շարժում է, այլ առաջնայնորեն նաեւ ուղղափառության նախաձեռնությունն է: Էկումենիզմի գաղափարը գալիս է 1902 թվականից, երբ Կոստանդնուպոլսի պատրիարք Հովակիմ Երրորդը հայրապետական կոնդակով ուղղափառ Եկեղեցիներից պահանջեց նրանց կարծիքը կաթոլիցիզմի եւ բողոքականության հետ ուղղափառության ներկա եւ ապագա հարաբերությունների մասին: Երուսաղեմի, Ռուսաստանի, Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի եւ Մոնտենեգրոյի Եկեղեցիները դրական արձագանքեցին այս կոչին[83]: 1919 թ. արդեն առաջարկվում էր ուշադրությամբ քննարկել բաժանված քրիստոնեական Եկեղեցիների միության խնդիրը, մասնավորապես Անգլիկան Եկեղեցու, հին Կաթոլիկ Եկեղեցու (Վատիկանի առաջին ժողովի՝ պապի անսխալականության վարդապետությունը մերժած Կաթոլիկ Եկեղեցիներ) եւ հայ գրիգորյանների հետ[84] (հատկապես Ուղղափառ Եկեղեցիների կողմից մեր Եկեղեցին սկսեց կոչվել Գրիգորյան, բայց ոչ թե նրա համար, որ ավելի պանծացվի Լուսավորչի հիշատակը, ով նաեւ իրենց համար փոնելի սուրբ է, այլ առավել նսեմացնելու Հայոց Եկեղեցին: Այսպիսով ցանկանում էին *Առաքելական* բառը հանել մեր Եկեղեցու անունից՝ շեշտելով, թե այն Լուսավորիչն է հիմնադրել եւ ոչ թե առաքյալները): Պոլսի Տիեզերական Պատրիարքությունը եւ Երուսաղեմի ու Ալեքսանդրիայի ուղղափառ

80 Traduction Œcuménique de la Bible, comprenant l'Ancien et le Nouveau Testament, traduits sur les textes originaux hébreu et grec avec introductions, notes essentielles, glossaire, nouvelle édition revue, 1996, Alliance Biblique Universelle – le Cerf, La Pochothéque, le livre de Poche :

81 Նոր Կտակարանի կիրառական մեկնություն, հեղինակեց՝ Թոմաս Հեյը, «Ընդհանուր դրույթներ» բաժինը պատրաստեց՝ Ստեփան Թորոսը, Հայ Ավետարանչական Ընկերակցություն, Եր., 2000, էջ 220:

82 Толковая Библия или Комментарий на все книги Св.Писания Ветхаго и Новаго Завета, том 3, Новый Завет, Петербург, 1911-1913, էջ 477:

83 Actes de la Conférence էջ 8:

84 Անդ, էջ 9:

պարիարքությունները ճանաչեցին անգլիկան ձեռնադրությունների առաքելական հաջորդականությունը եպիսկոպոսության առկայությամբ[85]: Անգլիկան Եկեղեցին ցանկանում էր իրականացնել իր միությունն ուղղափառության հետ, այնուհետեւ՝ բողոքականության միությունը[86]: Անգլիկան Եկեղեցու մերձեցումը եւ միությունն Ուղղափառ Եկեղեցու հետ կարծես լուծված խնդիր էր, քանի որ արեւելքի Ուղղափառ Եկեղեցիները դրան գրեթե վճռված լուծում էին տվել: Բայց Էդինբուրգի համագումարի ընթացքում Անգլիկան Եկեղեցին եւ ողջ համագումարը ցանկանում էին կարգը եւ խորհուրդները դիտել որպես միության հիմք բողոքական եկեղեցիների հետ, որոնցից ոմանք եպիսկոպոսություն եւ առաքելական հաջորդականություն չունեին: Բողոքական եկեղեցիներն ունեն այսպես ասած համընդհանուր, հոգեւոր [ըստ Ա Պետ. Բ 9-ի], բայց ոչ խորհրդագործական (sacramental) քահանայություն[87]: Բողոքականները ձեռնադրությունը չեն համարում Քրիստոսի կողմից հաստատված: Շատ էկումենիստներ ընդունում են, որ ձեռնադրությունը խորհուրդ է, բայց հաստատում են, որ մյուս խորհուրդների վավերականությունը կախված չէ ձեռնադրված քահանայի կամ եպիսկոպոսի իշխանությունից[88]: Սակայն անցյալ դարում ուղղափառության մեջ այն կարծիքը կար, որ ողջ բողոքական աշխարհում եպիսկոպոսական Եկեղեցին բոլորից մոտ է կանգնած ուղղափառությանը եւ անդադար զարգանում է այդ ուղղությամբ՝ բողոքականությունից դեպի ուղղափառություն, ինչպես նաեւ մեծ հույսեր էին փայփայում, «որ ուղղափառության եւ անգլո-ամերիկյան եպիսկոպոսական եկեղեցիների միավորումը այնքան էլ հեռու ապագայի գործ չէ եւ որ այն շրջադարձային կլինի կորուսյալ եկեղեցական միության վերականգնման պատմության մեջ»[89]: Սակայն Անգլիկան Եկեղեցում պաշտոնականորեն միասեռականության ընդունումը եւ ողջունումը ցրեց ուղղափառության հետ անգլիկանիզմի միության բոլոր սպասումները: Կաթոլիկ Եկեղեցին, որ վերոնշյալ պատճառներով չէր մասնակցում էկումենիկ շարժմանը, սկսեց աշխուժություն ցուցաբերել հատկապես Վատիկանի Բ ժողովից հետո եւ իր ազդեցությունը մեծացնել միջեկեղեցական այս շարժման շրջանակներում: Իր գերագույնության հաստատուն դիրքորոշումով հեռու մնալով Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ լինելուց՝ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին սկսեց դիտորդներ ուղարկել էկումենիկ ժողովներին եւ իր ձեռքը վերցրեց Անգլիկան Եկեղեցին իրեն միավորելու նախկին ուղղափառ նախաձեռնությունը: Այս նախաձեռնությունը հաջողություն ունեցավ հատկապես 2009 թվականի վերջում: Այն բանից հետո, երբ Անգլիկան Եկեղեցին սկսեց ձեռնադրել կանանց[90] կամ բացահայտորեն միասեռական եպիսկոպոսների եւ օրհնել միասեռականների միությունը, անգլիկան բազմաթիվ հավատացյալներ բաժանվեցին իրենց Եկեղեցուց եւ ցանկություն հայտնեցին միանալու Կաթոլիկ Եկեղեցուն: 2009 թ. հոկտեմբերի 20-ին Վատիկանի դավանանքի կոնգրեգացիայի ղեկավար Ուիլյամ Լեւադան հայտարարեց, որ Բենեդիկտոս 16-րդ պապը որոշել է պատասխանել այդ «բազմաթիվ խնդրանքներին»:

85 Անդ, էջ 16: ***Chrysostome Papadopoulos**, La question de la validité des ordinations anglicanes, trad. du grec en roum. par l'archimandrite F. L. Jocu, Bucarest, Tipografia Cărtilor Bisericesti, 1926, էջ 84:

86 Actes de la Conférence էջ 47:

87 Անդ, էջ 30:

88 Անդ, էջ 30-31:

89 **Сергей Булгаков**, Православие, էջ 266-267:

90 Անգլիկան Եկեղեցում առաջին անգամ կանայք ձեռնադրվեցին 1974 թ. Հոնկոնգում եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Պապը պետք է փաստաթուղթ ստորագրեր՝ թույլ տալու համար անգլիկաններին մտնելու Հռոմի Եկեղեցի: Դա մասնավոր կարգավիճակ կստեղծեր նոր կաթոլիկների համար՝ թույլ տալով նրանց պահպանելու հոգևոր եւ ծիսական առանձնահատկությունները որոշ արեւելյան Եկեղեցիների նման: Պաշտոնական հայտարարություն ստորագրվեց Քենթբերիի անգլիկան արքեպիսկոպոս Ռոուան Վիլյամսի եւ Վեսթմինսթրի (Լոնդոն) կաթոլիկ արքեպիսկոպոս Վինսենթ Նիքոլսի կողմից: Սրանում ստորագրող երկու պատասխանատուները երկու Եկեղեցիների միջեւ էկումենիզմի վկայություն են տեսնում[91]: Դեռեւս 2008 թվականից Անգլիկան Եկեղեցիների՝ Անգլիկան Հաղորդության Աֆրիկայի, Օկեանիայի, Հարավային Ամերիկայի երեք հարյուր եպիսկոպոսներ որոշեցին առանձնանալ եւ այլեւս չժողովվել Լամբեթում տեղի ունեցող Անգլիկան Եկեղեցիների եպիսկոպոսաց ժողովին: Այս բաժանարար շարժման կողմնակիցներից ոմանք ցանկացան մնալ անգլիկան, իսկ ոմանք էլ նախընտրեցին միանալ Կաթոլիկ Եկեղեցուն: Տակավին 2007 թ. Ավստրալիայի արքեպիսկոպոս Ջոն Հեպվորդը Կաթոլիկ Եկեղեցուն միանալու դիմում էր ներկայացրել Բենեդիկտոսին, եւ նույն թվականին Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը վերադարձել էր նախկին անգլիկան, այսինքն՝ հրաժարվելով Անգլիկան Եկեղեցուց՝ դարձի էր եկել Կաթոլիկ Եկեղեցու գիրկը, ինչը մեծապես ողջունվեց Վատիկանի կողմից: 2009 թ. նոյեմբերի 9-ին Կաթոլիկ Եկեղեցին պաշտոնապես բացեց իր դռները Կաթոլիկ Եկեղեցուն միանալ ցանկացող անգլիկանների առջեւ: Սա բազմաթիվ բանավեճերի տեղիք տվեց: Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներն սկսեցին հայտարարել, որ անգլիկաններին կաթոլիկության դարձնելն ունիատիզմ՝ ունիթորություն, միարարություն չէ, որպիսին դրսեւորում էր Կաթոլիկ Եկեղեցին միջնադարում արեւելյան Եկեղեցիների հանդեպ, այլ սա նախ եւ առաջ պետք է դիտել էկումենիկ տեսանկյունից: Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Վալտեր Կասպերը հայտարարեց. «Մենք ձկնորսություն չենք անում անգլիկան լճերում»: Նման դիրքորոշումն արդարացվում է նրանով, որ Կաթոլիկ Եկեղեցուն միացած անգլիկանները, միեւնույն է, արդեն առանձնացել են Անգլիկան Հաղորդությունից: Սակայն հայտնի ասփվածաբան Հանս Կյունգը չհապաղեց անգլիկաններին կաթոլիկության ընդունելու պապի վարմունքը որակել որպես անպատեհ եւ հակաէկումենիկ[92]:

Այսուհանդերձ, ուղղափառության մեջ էլ կա այն պնդումը, որ ուղղափառությունը պետք է իր ծոցն առաջնորդի հին քույր, այսօր այլափառ Եկեղեցիներին (այս Եկեղեցիների շարքում ամենաառաջինը նշվում է Հայոց Եկեղեցին) եւ հավաքի բոլոր Եկեղեցիներին հավատքի մաքուր եւ պայծառ աղբյուրի շուրջ[93]: Եւ նախընտրելի է սիրաշահել ոչ ուղղափառ քրիստոնյաներին, որպեսզի նրանց ուղղափառության դարձնելը հեշտ լինի[94]: Եւ մինչ կաթոլիկները ձգտում են ամենուր առաջ տանել իրենց գերագույնության գաղափարը եւ եկեղեցական միությունը պատկերացնել կաթոլիկության հետ այլ Եկեղեցիների միավորմամբ,

91 Կաթոլիկ եւ Անգլիկան Եկեղեցիների սույն հարաբերությունների մասին տես՝ Pèlerin, l'hebdo du quotidien, N° 6622, jeudi, 29 octobre, 2009, էջ 14:

92 Անգլիկաններին Կաթոլիկ Եկեղեցի ընդունելու վերաբերյալ վերոնշյալ տեղեկությունները տես՝ Croire aujourd'hui, janvier 2010, N°263, էջ 29-30:

93 Actes de la Conférence էջ 63, 74:

94 **Диакон Андрей Кураев**, О книге о. Рафаила "Вызов новомодернизма:

ուղղափառները մյուս կողմից իրենց համարում են ճշմարիտ հավատքի միակ աղբյուր, դեպի որը պետք է առաջնորդեն մյուս Եկեղեցիներին:

Էկումենիկ հարաբերություններում մեզ համար մտահոգիչ են Կաթոլիկ Եկեղեցում շրջանառվող՝ դարերի ընթացքում այդպես էլ չփոխված գերիշխանության, շնորհներն այլ Եկեղեցիներին Կաթոլիկ Եկեղեցու միջոցով փոխանցվելու, պապի գերագահության եւ անսխալականության, ինչպես նաեւ Ուղղափառ Եկեղեցում շրջանառվող՝ հավատքի անաղարտության եւ ճշմարտության միակ աղբյուր հանդիսանալու, այլ Եկեղեցիները փրկարար շնորհներից զուրկ հայտարարելու, Բողոքականության մեջ շրջանառվող՝ միայն շնորհով փրկության, առաքելահիմն Եկեղեցիների ավանդության, սրբազան խորհուրդների, եկեղեցական նվիրապետության անհարաժեշտության մերժման եւ նմանատիպ այլ ուսմունքները, որոնցով երբեք չի դառապել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Ցանկանում ենք հուսալ, որ սույն ուսումնասիրությունը ներկայացնում է Էկումենիզմին մասնակից Եկեղեցիների դիրքորոշումների բացասական բեւեռը եւ որ իրական Ճշմարտությանը հետեւելու, Եկեղեցիների միջեւ սերն ու միությունն ամրապնդելու կեղծավորությունից զերծ ձգտումներն ապագային կգերակշռեն եկեղեցական մերժելի հավակնությունների համեմատ, քանզի չեն կարող անարդյունք մնալ Քրիստոսի խոսքերը. «Որպեսզի ամենքը մի լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Իմ մեջ, եւ Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ Մեր մեջ լինեն, եւ որպեսզի աշխարհն էլ հավատա, որ Դո՛ւ ուղարկեցիր Ինձ: Եվ Ես տվեցի նրանց այն փառքը, որ Դու Ինձ տվեցիր, որպեսզի մի լինեն, ինչպես եւ Մենք մի ենք: Ես՝ Նրանց մեջ, եւ Դու՝ Իմ մեջ, որպեսզի կատարյալ լինեն միության մեջ» (Յովհ. ԺԷ 20-23):